ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 դեկտեմբերի 2025 թվականի N 1832 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1667-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի «Պետական գույքի օտարման և վարձակալության տրամադրման նպատակով էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի անցկացման կարգը հաստատելու մասին» N 1667-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Էլեկտրոնային աճուրդի կազմակերպման ժամկետի մասին հրապարակային ծանուցումը կազմակերպչի էլեկտրոնային կայքում (այսուհետ՝ կայք) հրապարակվում է գույքի աճուրդով վաճառքի և/կամ վարձակալության մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով

հաստատված N 1 հավելվածով սահմանված կարգի պահանջներին համապատասխան ներկայացված գույքի աճուրդով վարձակալության տրամադրման դեպքում՝ աճուրդ կայացնելու վերաբերյալ որոշում ընդունելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ աշխատանքային ժամերին: Էլեկտրոնային աճուրդն անցկացվում է պետական գույքի վարձակալության տրամադրման մասին և պետական շարժական գույքի օտարման մասին հրապարակային ծանուցմանը հաջորդող 15-րդ օրվանից, իսկ պետական անշարժ գույքի օտարման մասին հրապարակային ծանուցմանը հաջորդող 45-րդ օրվանից ոչ շուտ:».

2) որոշմամբ հաստատված հավելվածի 13-րդ կետի 9-րդ ենթակետը «մակերեսները,» բառից հետո լրացնել «Քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված՝ գույքի քաղաքաշինական սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ տարածական պլանավորման փաստաթղթերի» բառերով.

3) որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18. Համակարգում գրանցված անձը կարող է մասնակցել պետական գույքի օտարման և վարձակալության տրման նպատակով կազմակերպվող էլեկտրոնային աճուրդին սույն կարգի 20-րդ կետով սահմանված ժամկետի մեկնարկից սկսած մինչև ավարտից առնվազն 5 րոպե առաջ՝ նախավճար վճարելու դեպքում: Էլեկտրոնային աճուրդի նախավճարի չափը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

1) պետական գույքի օտարման դեպքում՝

ա. լոտի մեկնարկային գնի մինչև 100 000 դրամի (ներառյալ) դեպքում նախավճարի չափը սահմանվում է մեկնարկային գնի 50 տոկոսի չափով,

բ. լոտի մեկնարկային գնի 100 001-1 000 000 դրամի դեպքում՝ 40 տոկոսի չափով,

գ. լոտի մեկնարկային գնի 1 000 001- 10 000 000 դրամի դեպքում՝ 30 տոկոսի չափով,

դ. լոտի մեկնարկային գնի 10 000 001- 100 000 000 դրամի դեպքում՝ 20 տոկոսի չափով,

ե. լոտի մեկնարկային գնի 100 000 001- 500 000 000 դրամի դեպքում՝ 10 տոկոսի չափով,

զ. լոտի մեկնարկային գնի 500 000 001 դրամից ավելիի դեպքում՝ 5 տոկոսի չափով.

2) վարձակալության տրամադրման դեպքում՝

ա. լոտի մեկնարկային գնի մինչև 100 000 դրամի (ներառյալ) դեպքում նախավճարի չափը սահմանվում է մեկնարկային գնի 300 տոկոսի չափով,

բ. լոտի մեկնարկային գնի 100 001- 1 000 000 դրամի դեպքում՝ 100 տոկոսի չափով,

գ. լոտի մեկնարկային գնի 1 000 001 դրամից ավելիի դեպքում՝ 50 տոկոսի չափով։».

4) որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետում «18-րդ» բառը փոխարինել «18-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով» բառերով.

5) որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետը «հաջորդող» բառից հետո լրացնել «երրորդ» բառով.

6) որոշմամբ հաստատված հավելվածի 27-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«27. Սույն կարգի 25-րդ կետով նախատեսված վճարումները կատարելուց հետո (բացառությամբ տրանսպորտային միջոցների օտարման դեպքերի), Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակցի հետ կնքվում է առուվաճառքի կամ վարձակալության պայմանագիր և իրականացվում են գույքի հանձնման-ընդունման աշխատանքներ։».

7) որոշմամբ հաստատված հավելվածի 32-րդ կետը «եզրակացությունը» բառից հետո լրացնել «, ընդ որում, եթե տեխնիկական անսարքության (ձախողման) պատճառով մասնակիցներից մեկը հաղթող է ճանաչվել, ապա կազմակերպիչն անսարքության պատճառների մասին տեղեկանքի հիման վրա կազմում է հաղթող չճանաչելու մասին արձանագրություն, վճարված նախավճարը 3 աշխատանքային օրվա ընթացքում ապասառեցվում է, իսկ համապատասխան հաշվին փոխանցվածը՝ կազմակերպչի կողմից վերադարձվում է։» բառերով.

8) որոշմամբ հաստատված հավելվածի 36-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«36. Յուրաքանչյուր չկայացած էլեկտրոնային աճուրդից հետո՝ հինգերորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի աճուրդի դրված լոտի մասին հրապարակային ծանուցումը և աճուրդն անցկացվում է պետական գույքի վարձակալության տրամադրման և պետական շարժական գույքի օտարման դեպքում՝ ծանուցման հրապարակմանը հաջորդող 15-րդ օրվանից, իսկ պետական անշարժ գույքի օտարման դեպքում՝ 45-րդ օրվանից ոչ շուտ: Եթե էլեկտրոնային աճուրդը չի կայանում, ապա լոտի մեկնարկային գինը սահմանվում է հետևյալ կերպ՝

1) պետական գույքի օտարման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն որոշմամբ սահմանված կարգով.

2) վարձակալության տրամադրման դեպքում՝ հաջորդ աճուրդը կազմակերպելուց լոտի մեկնարկային գինն իջեցվում է համապատասխան իրավական ակտով սահմանված չափով:».

9) որոշմամբ հաստատված հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 36.1-ին կետով.

«36.1. Եթե աճուրդը համարվում է չկայացած, հաղթող մասնակցի կողմից վճարումները սույն կարգով սահմանված ժամկետում չկատարվելու կամ աճուրդային արձանագրությունը չստորագրվելու, ինչպես նաև մասնակցի կողմից ներկայացված տվյալներն ու փաստաթղթերը սխալ լինելու պատճառով, ապա այդ դեպքերում հաջորդ աճուրդը կազմակերպվում է առանց մեկնարկային գնի նվազման, իսկ նախավճարը սահմանվում է՝ սույն կարգի 18-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված սանդղակներով հաշվարկված նախավճարի մեծությունը բազմապատկելով 1.1 գործակցով, որը կարող է կիրառվել մեկ անգամ:».

10) որոշմամբ հաստատված հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 36.2-րդ կետով.

«36.2. Սահմանել, որ սույն որոշման հաղթող մասնակցի կողմից վճարումները սույն կարգով սահմանված ժամկետում չկատարվելու կամ աճուրդային

արձանագրությունը չստորագրվելու հիմքով վարձակալության տրամադրման նպատակով կազմակերպված աճուրդը չկայացած համարվելու դեպքում, հաղթող մասնակիցը կորցնում է գույքի վարձակալության համար տվյալ լոտի բոլոր հաջորդիվ անցկացվող աճուրդներին մասնակցելու իրավունքը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 10-րդ ենթակետի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասնհինգերորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

16.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ